

**ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Խորհրդային Միության անկման հետևանքով Կովկասում պայթեցին 70 տարի սեղմված ազգային հիմնախնդիրներն ու պատմական ամարդարությունները լուծելու ծգտումներն ու պահանջները: Յոթ տասնամյակների արդյունքում արմատավորված ազգամիջյան հակասությունները, ինչպես նաև նորանկախ պետությունների ներսում քաղաքացիական անհնազանդության ռազմական դրսևորումները Կովկասը վերածեցին մի հսկա ռազմական թատերաբեմի, ուր տեղի էին ունենում արյունալի տեսարաններ: 1990-ական թվականների սկզբներին Կովկասյան տարածաշրջանում մղվող պատերազմները շփոթեցրել էին անգամ գերտերություններին, և եթե Ռուսաստանը դեռ ավանդույթի ուժով փորձում էր պահպանել ազդեցության գոնե մի քանի գոտիներ, ըստ այդմ՝ ներքաշվելով պատերազմի մեջ, ապա Արևմուտքը հապաղում էր հաստատվել Կովկասում:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո ԱՄՆ Պետական դեպարտամենտի ներկայացուցիչների կողմից արված հայտարարությունների համաձայն՝ Հարավային Կովկասի երեք նորանկախ հանրապետությունների հետ փոխհարաբերություններում նա առաջնորդվում էր միևնույն սկզբունքներով. տարածաշրջանում կայունության և խաղաղության հաստատում՝ առաջին հերթին Հայաստանի և Ադրբեջանի միջև, ժողովրդավարության հաստատում, բոլոր երեք հանրապետություններում տնտեսական բարեփոխումների խթանում, վերոհիշյալ հանրապետություններում ԱՄՆ քաղաքացիների անվտանգության ապահովում¹: Սակայն հարկ է նշել, որ այս սկզբունքներն ի սկզբանե կրում էին զուտ արձանագրային բնույթ: Վաշինգտոնը Հարավային Կովկասի հետ հարաբերություններում ի սկզբանե առաջնորդվում էր հետևյալ հայեցակարգով.

- որոշակի լարվածություն առաջացնել Վրաստան-Ռուսաստան հարաբերություններում,

¹ St'u Hunter T., The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict, CSIS, Washington, D.C., 1994, p. 52.

- խորացնել և ընդլայնել Վրաստան-Թուրքիա, Ադրբեջան-Թուրքիա և Վրաստան-Ադրբեջան քաղաքական, տնտեսական ու ռազմական համագործակցությունը,

- խրախուսել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները և այլն:

Ընդհանրապես Միացյալ Նահանգները դեռևս ԽՍՀՄ անկման փուլում և հատկապես նրա տրոհումից հետո, իր ազդեցության ոլորտների ընդլայնման գործընթացը կանխանշեց որակապես նոր տեսական մշակումներով, որը եվրասիայի դեպքում իր հստակ դրսևորումներ է գտնում մայրցամաքի որոշակի շրջանների տարածական նոր զնահատականներում: Ըստ այդմ, Առաջավոր Ասիայում տեսական ասպարեզ են իջեցվում «Ավանդական Մերձավոր Արևելք» և «Մեծ Մերձավոր Արևելք» աշխարհագրական բնորոշումները: Ընդ որում վերջինս, ներառելով «Ավանդականը»՝ Անդրկովկասի հետ մեկտեղ, տարածվում է մինչև Իրան, Միջին Ասիա: Դրանով փաստորեն ԱՄՆ-ի համար ճանապարհ էր հարթվում դեպի ԱՊՀ ողջ հարավ-արևելյան գոտին: Սակայն, հարկ է նշել, որ այս ամենը դեռևս տեսական հիմքերի վրա էր գտնվում: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների տարածական՝ դեպի ԱՊՀ ընդլայնմանը ներդաշնակ արհեստականորեն ընդլայնվում են նաև Եվրոպայի աշխարհագրական սահմանները և այս դեպքում ևս ներառյալ Անդրկովկասը (ԱՄՆ Մերիլենդի համալսարանի քաղաքագետների, Ջ. Բոեզինսկու և այլոց կողմից): Այսպիսով, հնարավորություն է ընձեռնվում պահի պահանջներին համապատասխան՝ Անդրկովկասի ասիականացման կամ Եվրոպականացման միջոցով այս տարածաշրջանի թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ ռազմաքաղաքական և թե՛ տնտեսական խնդիրները ներկայացնել ինչպես «Եվրոպական անվտանգության», այնպես էլ Մերձավոր Արևելքում արդեն փորձարկված «կենսական շահերի» համատեքստերում²:

Տարածաշրջանում ռազմական գործողությունների դադարեցումից հետո (1994թ.) ևս պատերազմող երկրները դժվարությամբ էին ապաքինում վերքերը. Ադրբեջանը դարաբաղյան պատերազմից դուրս էր եկել պարտված: Վրաստանը դեռ չարունակում էր փոթորկվել վրաց-աբխազական բախումների մեջ: պատերազմը, էներգետիկ ճգնաժամը, շրջափակումները հյուծել էին նաև Հայաստանը: Այսօրինակ տագնապալի իրավիճակին ավելանում էր չեչենական պատերազմը, ինչպես նաև նախապատերազմական տրամադրություններ էին բորբոքվում կովկասյան այլ կետերում: Բացի այդ, Հայաստանում քաղաքական ընդի-

² Տես Զարգարյան Մ., Մետաքսի ճանապարհը՝ տարածաշրջանի պատմամշակութային անցյալի և քաղաքական ներկայի համատեքստերում, *ՈՒՊՊ*, Ե., 1999, էջ 1-2:

մությունն իշխանություններին մեղադրում էր ռազմական հաղթանակները դիվանագիտորեն ամրապնդելու անկարողության մեջ, Ադրբեջանում անվերջ իշխանափոխությունների արդյունքում ծայր էր առել քաղաքական հետապնդումների շղթան, քաղաքացիական անհնազանդության դրսևորումները Կրաստանում շարունակում էին կրել ռազմական բնույթ: Փաստորեն, ժամանակն անխափան աշխատում էր ԱՄՆ-ի օգտին, մանավանդ, որ Ռուսաստանն իր ահռելի հիմնախնդիրների համար էր լուծումներ որոնում:

Հաստատված փխրուն խաղաղության պայմաններում ԱՄՆ-ը փորձեց վերստին մուտք գործել Կովկաս: Սակայն, հարկ է նշել, որ Վաշինգտոնի կողմից Կովկասը դեռ չէր ընկալվում որպես մեկ միասնական և ընդհանուր համակարգ, ուստիև Միացյալ Նահանգները զգուշորեն և անշտապ գործընկերներ էր փնտրում նախևառաջ Անդրկովկասում, որը հմտորեն և աննկատ վերանվանեցին Հարավային Կովկաս³: Նախնական ընտրությունը կատարելով՝ 1990-ական թթ. սկզբներին հարավկովկասյան պետություններից ԱՄՆ-ը փորձում էր Հայաստան մտնել՝ չառաջացնելով որևէ խուճապ, մանավանդ որ այստեղ իշխանության էին եկել ազատականամետ ուժերը: Բացի այդ, Արևմտյան արժեքները պետության և հասարակության զարգացման հիմքում դնելու մասին երևանի հավաստիացումները թերահավատություն չէին առաջացնում միջազգային հանրության մոտ, որի համար Հայաստանը տարածաշրջանի «ժողովրդավարության կղզյակն էր» և առանձնանում էր ներքաղաքական իրավիճակի կայունությամբ⁴: Քանզի, ի տարբերություն կովկասյան մյուս պետությունների, ընդդիմության պայքարն այստեղ երբևէ չվերածվեց զինված ընդհարումների, և երկիրը զերծ մնաց քաղաքացիական պատերազմներից: Այդօրինակ իրավիճակում՝ 1991թ. դեկտեմբերի 27-ին, ճանաչելով Հայաստանի անկախությունը՝ ԱՄՆ-ը 1992թ. մեր երկրում առաջինը բացեց դիվանագիտական ներկայացուցչություն: Փաստորեն, Կովկասում իր ներկայությունն ապահովելու և այնտեղ աստիճանաբար ամրանալու հեռանկարին հետամուտ՝ Վաշինգտոնը որոշեց հաստատվել Հայաստանում: Վերոհիշյալ տարածաշրջանն ԱՄՆ-ի համար այլևս անմատչելի ու անառիկ չէր՝ ինչպես անցյալում:

Սակայն, 1994 թ.-ից հետո երևանը սկսեց նահանջել որդեգրած արժեքներից՝ Հայաստանն աստիճանաբար զիջեց իր դիրքերը, և հարավկովկասյան երեք պետություններին միացնող ավելի շատ հանգամանքներ ու որակներ

³ Sbu Myradjan I., Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа, Е., 2000, стр. 42.

⁴ ԱՄՆ-ում մեկ միլիոնից ավելի հայկական սփյուռքի առկայությունն արդեն իսկ կամուրջ էր ստեղծել երկու երկրների միջև:

ավելացան, որոնց արդյունքում կտրուկ նվազեցին տարբերությունները: 1995թ. ծայր առած ընտրական գործընթացների խեղաթյուրումը, ընտրապայքարը քաղաքական հարթությունից քրեական տեղափոխելու մեխանիզմները, ընտրությունների միջոցով իշխանություններ ձևավորելու անհնարինությունը և այլն, վերջնականապես ջնջեցին տարբերություններն անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև:

Այսօրինակ իրավիճակը լոջորեն մտահոգում էր ԱՄՆ-ին. Վաշինգտոնի համար այդ ժամանակաշրջանում տեսանելի էր երկու ճանապարհ՝ կամ մնալ և հաստատվել Կովկասում՝ ընդունելով հանգամանքներն ու իրողություններն այնպես ինչպես կան, կամ հեռանալ: Վաշինգտոնն ընտրեց առաջին ճանապարհը: Փաստորեն այդ ընտրությամբ նա, թերևս, կատարեց կովկասյան քաղաքականության իր հերթական սխալը. անտեսեց մեկ այլ ուղու գոյությունը, այն է՝ Կովկասից չհեռանալով՝ չնահանջել ժողովրդավարական ինստիտուտները կայացնելուց: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ շրջանում ԱՄՆ-ում կարծում էին, որ մեկ միասնական Կովկաս ստեղծելու գաղափարին հասնելու համար այնտեղ պետք էր ավելի շատ խթանել երկրների ու ժողովուրդների նմանությունները, իսկ տարբերությունները՝ մոռացնել: Սակայն այստեղ ևս ԱՄՆ կովկասյան քաղաքականության ձգտումները և կանխատեսումները չարդարացան: Մասնավորապես Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում եթե ներքին քաղաքականությունն աստիճանաբար մոտեցնում էր նմանությունների սահմանները, ապա այդ երկրների արտաքին քաղաքական ուղեգծերը չուներին ընդհանուր եզրեր, եթե իհարկե անտեսենք, որ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ընդհանուր լուծումներ էին փորձում գտնել Հայաստանը և Ադրբեջանը:

Անդրադառնալով հետխորհրդային շրջանի հայ-ամերիկյան հարաբերություններին՝ հարկ է փաստել նաև, որ 1997թ. սկիզբ դրվեց Անդրկովկասի հանդեպ ամերիկյան քաղաքականության ժամանակակից փուլին: 1997թ. ամերիկյան վարչակազմը հայտարարեց ԱՄՆ-ի համար անդրկովկասյան երկրների կենսական քաղաքական և տնտեսական կարևորության մասին: 1997թ. հուլիսին Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հարցերով «Ժառանգություն» ֆոնդի հայտնի փորձագետ Ա. Կոենը ԱՄՆ-ի քաղաքական գործիչներին կոչ արեց «գիտակցել, որ Կովկասը և Կենտրոնական Ասիան հսրիորդային Միության փլուզումից հետո դադարել են ռուսական ազդեցության ոլորտ լինել... Պատմության մեջ

առաջին անգամ ԱՄՆ-ը և իրենց դաշնակիցները մուտք ունեն դեպի եվրասիական ներքին տարածքները և դրանց առատ տնտեսական պաշարները»⁵:

Իսկ 1997թ. ապրիլին ԱՄՆ նախագահ Բ. Զլինտոնը Սենատում հանդես եկավ «Մետաքսի ճանապարհի ռազմավարություն-97» ծրագրով, համաձայն որի նախատեսվում էր կառուցել նավթատարներ Կասպյան ավազանից դեպի միջերկրական՝ Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա ուղղությամբ և դեպի Դնդկական օվկիանոսի ափերը՝ միջինասիական պետությունների, Պակիստանի և Աֆղանստանի տարածքով: Իսկ ավելի լայն իմաստով՝ ծրագիրն ուղղված էր անդրգամաքային և անդրասիական համագործակցության այնպիսի համակարգի վերաստեղծմանը, որն իր դասական դրսևորումն էր գտել Մետաքսի ճանապարհի երթեմնի շրջանակներում: Փաստորեն, վերը նշված ծրագիրը որոշեց ԱՄՆ միասնական քաղաքական գիծն Անդրկովկասի և Միջին Ասիայի նկատմամբ:

Վերոհիշյալ ծրագիրն, ըստ էության, հեռանկարում կարող էր Ասիայի մի ընդարձակ և անհանգիստ տարածքում հուսալի հիմքեր ապահովել, թեկուզև շահադիտական նկատառումներով թելադրված, բայց կայուն կապերի հաստատման համար: Սակայն, այստեղ ուշադրության էր արժանի մեկ հանգամանք. այդ ծրագիրն ի սկզբանե արհեստականորեն հարմարեցված էր նախածոնողի քաղաքական հակումներին՝ զուտ տնտեսական տրամաբանության արտահայտությամբ: Կարելի է ասել, որ ստեղծվելիք համագործակցության դաշտն ապահովող հաղորդակցական (ոչ միայն նավթատար) համակարգի հիմքում, որպես նախապայման դրված էր Ռուսաստանի և Իրանի մասնակցության հնարավորությունների բացառումը: Իրական դրդապատճառները, որոնց ազդեցությամբ կյանքի կոչվեց այս գաղափարը, բավականաչափ հասկանալի էին. Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում ռուսական, հավասարապես նաև իրանական ազդեցության հնարավորինս թուլացում: Այս ամենը պետք է կատարվեր «պատմական ավանդույթի վերականգնման» ներքո՝ կասպիական և միջինասիական էներգակիրների կատարյալ մատչելիության ապահովման, ԱՊՀ որոշակի տարածքների «միջազգայնացման» միջոցով վերջիններիս վրա Ռուսաստանի ազդեցության մեկուսացման, Կասպիականի աշխարհաքաղաքական բնութագրի փոխակերպման միջոցով:

⁵ Սիխայլով Ս., Վրաստանի և ԱՄՆ-ի հարաբերությունները, Դայրենի Ջալախք, Պեյրուք, 2002, էջ 431:

Սակայն, այն հանգամանքը, որ անդրցամաքային երբեմնի համակարգի վերականգնման ծրագրում, ըստ էության, բացառվում էր Իրանի մասնակցությունը, նույնիսկ չէին հիշատակվում բուն Մետաքսի ճանապարհի մերձավոր-արևելյան մյուս կարևորագույն հանգույցները, արդեն իսկ առիթ էր տալիս կարծելու, որ վերջինիս անվանումը միմիայն հարմար ցուցապաստառ էր: Ըստ էության, վերոհիշյալ ծրագրում անտեսված էին Հայաստանը, Սիրիան, Լիբանանը, իսկ Թուրքիայի մասնակցությունն ապահովվում էր Վրաստանի և Ադրբեջանի միջոցով: Հետաքրքրականն այն էր, որ ծրագրի քաղաքական նպատակամղվածությունն առանձնապես չէր էլ քողարկվում: Դեռևս մինչև ԱՄՆ-ի նախագահի կողմից ծրագրի ներկայացումը՝ 1997թ. մարտի 27-ին, նրա ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ս. Բերգերն Անդրկովկասն ու Կասպյան ավազանը բնորոշեց որպես ԱՄՆ-ի «ռազմավարական շահերի գոտի», որում պետք է ենթադրել, դերերի բաժանումը կկատարվեր նրա նախընտրություններից ելնելով՝ անկախ տարածաշրջանի պատմական իրողությունից⁶: Ընդ որում, որպես ճշված ծրագրի իրագործման նախատեսված միջոց՝ անմիջապես սկսեցին ձևավորվել տարաբնույթ առանցքներ, որոնք ձգվում էին Ռուսաստանի գրեթե ողջ հարավային սահմանագծով՝ Մոլդովայից մինչև Ադրբեջան ու Կասպից ծովից արևելք, ինչպես նաև կազմակերպվում էին տարաբնույթ լուծմներ և համաժողովներ⁷: Բացի այդ, հաշվի առնելով որոշակի գործոնների առկայության պարագայում հիմնային ծրագրի իրագործմանը սպառնացող վտանգը, ԱՄՆ-ը նախատեսում էր Ռուսաստանի ողջ «մերձավոր արտասահմանը»՝ Ուկրաինայից մինչև Միջին Ասիա, ներառել իր ռազմական ուժերի ուշադրության շրջանակներում:

Վերադառնալով 1990-ական թթ. վերջերին ԱՄՆ-ի կողմից վարած քաղաքականությանը՝ անհրաժեշտ է նշել, որ դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցում ԱՄՆ-ի ցանկությունն ու շահագրգռվածությունը կասկածների տեղիք չէին տալիս. գերտերություններից նախևառաջ ԱՄՆ-ին էր ձեռնառու խաղաղ և կայուն Անդրկովկասը, քանի որ ամերիկյան քաղաքական և ֆինանսական միջոցները միայն խաղաղ պայմաններում կարող էին էական արդյունքներ տալ: Սակայն այստեղ Վաշինգտոնը հանդիպեց տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հակասություններին: Դրանով հանդերձ, Վաշինգտոնը հիմնախնդրի կարգավորման առումով

⁶ Զարգարյան Մ., Մետաքսի ճանապարհը՝ տարածաշրջանի պատմամշակութային անցյալի և քաղաքական ներկայի համատեքստերում, էջ 2:

⁷ Սյս ամենը կատարվում էր նույն ճանապարհի հայտարարված վերագործարկման պատրվակով:

երևանի և Ստեփանակերտի վրա առանձնապես մեծ ճնշում չգործադրեց, ինչն առաջացնում էր Բաքվի և Անկարայի որոշակի տարակուսանքը: ԱՄՆ որոշեց նախ տեղում ստուգել, ապա «մշակել» համրային կարծիքը՝ Հայաստանին և Ադրբեջանին հաշտեցնելով փոխզիջման գաղափարի հետ: Սակայն ԱՄՆ-ի այդօրինակ վարքագիծը դարձյալ արդյունք չտվեց, քանի որ կողմերը լավ էին պատկերացնում իրական հետևանքները: Արդյունքում Վաշինգտոնը դիվանագիտական պարտություններ կրեց Քի Վեստում, Փարիզում և Ժնևում⁸:

Զնայած այս ամենին, պետք է նշել, որ հայ-ամերիկյան հարաբերությունները 1990-ական թթ. ընթացքում ընդգրկել են համագործակցության լայն շրջանակ: Մասնավորապես, Հայաստանի և ԱՄՆ-ի միջև կնքվել են տնտեսական ոլորտին վերաբերող երեք փաստաթուղթ. Առևտրային հարաբերությունների և Ներդրումների խրախուսման մասին համաձայնագրերը, ինչպես նաև Ներդրումների փոխադարձ քաջալերման և պաշտպանության մասին պայմանագիրը⁹: Առևտրատնտեսական համագործակցության զարգացման առումով կարևորվում է նաև տնտեսական հարցերով Հայ-ամերիկյան միջկառավարական աշխատանքային խմբի գործունեությունը, որի ստեղծման մասին Հուլագիոր ստորագրվել է 2000թ. հունվարի 27-ին՝ երևանում: Հարկ է հիշատակել նաև, որ 1992-2001թթ. ԱՄՆ կառավարության բոլոր գերատեսչությունների կողմից Հայաստանին տրամադրված ընդհանուր օգնության ծավալը հասնում է 1.4 մլրդ դոլարի: Ընդ որում, ամենամեծ ծավալի օգնությունը տրամադրվել է 1993թ., երբ դրա ընդհանուր արժեքը հասել էր 214 մլն դոլարի¹⁰:

1990-ական թվականների վերջերից որոշակի կարևորություն ստացավ նաև Հայաստանի և ԱՄՆ-ի համագործակցությունը ռազմաքաղաքական և անվտանգության ոլորտներում:

1997թ. ի վեր ամեն տարի ՀՀ արտաքին գործերի նախարարության և ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչների միջև տեղի են ունենում հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են միջազգային անվտանգությանը և ռազմավարությանն առնչվող երկուստեք հետաքրքրություններ կայացնող

⁸ Стен Шакарянц С., Политика постсоветской России на Кавказе и ее перспективы, АЦСНИ, Е., 2001, стр. 93-98.

⁹ Стен Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու (1991-1995թթ.), 77 արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, N 1, 2002, էջ 68-76:

¹⁰ Стен Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001թթ., 77-ում ԱՄՆ դեսպանատուն, Ե., 2001, էջ 14:

խնդիրներ¹¹։ Արդյունքում, համագործակցություն է ծավալվել մարդասիրական ականազերծման, զանգվածային ոչնչացման զենքերի չտարածման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտներում (այս ծրագրերի իրականացման համար խոչընդոտ չէին հանդիսանում 907 բանաձևով նախատեսված սահմանափակումները)։

Այս համատեքստում հարկ է հիշատակել, որ Հայաստանի նկատմամբ շրջափակում կիրառելու հետևանքով Ադրբեջանին ամերիկյան օգնություն տրամադրելու հարցում սահմանափակումների վերաբերյալ Կոնգրեսի Ազատության Աջակցության Ակտի 907 բանաձևի հետևանքով ԱՄՆ պետդեպարտամենտի համապատասխան գործադիր հրահանգը սահմանափակում էր Սիացյալ Նահանգների կողմից Հայաստանին այնպիսի օգնության տրամադրումը, որը կմեծացներ Հայաստանի ռազմական ներուժը։ Այնուամենայնիվ, անգամ 907 բանաձևի առկայության դեպքում Վաշինգտոնը զուգահեռ ծրագրեր էր սկսել Հայաստանում և հարևան կովկասյան հանրապետություններում՝ զանգվածային ոչնչացման զենքերի չտարածման, մարդասիրական ականազերծման և այլ ոլորտներում։

Փաստենք նաև, որ 2001թ. նոյեմբերին՝ 907 բանաձևում մտցված փոփոխության համաձայն, ԱՄՆ-ն հակահարեկչական պայքարի նպատակներով Ադրբեջանին պետք է հատկացնի ռազմական օգնություն՝ պայմանով, որ այն չօգտագործվի Կովկասի հայ համայնքների դեմ։ Ընդ որում, միաժամանակ Հայաստանին նույնպես կցուցաբերվի ռազմական օգնություն. նախատեսված է 4 մլն ԱՄՆ դոլարի չափով օգնություն և 300 հազար դոլարի տրամադրում վերապատրաստման նպատակներով։

Սակայն, հարկ է նշել, որ 907 բանաձևի փոփոխության կապակցությամբ Երևանն ունի հետևյալ նկատառումները.

- Հայաստանն ակնկալում է, որ օգնության բաշխումն Ադրբեջանում կվերահսկվի՝ խոչընդոտելով Լեռնային Ղարաբաղի կամ Հայաստանի դեմ դրա օգտագործումը։
- Հայաստանի իշխանությունները հույս են հայտնում, որ բանաձևի փոփոխության հետևանքով ցուցաբերվող օգնության արդյունքում տարածաշրջանում չի խախտվի ռազմական կարողությունների հաշվեկշիռը։
- Երևանը մտահոգություն է հայտնում, որ բանաձևի վերացումը և օգնության տրամադրումն Ադրբեջանին, կարող են սխալ ազդանշան ծառայել Բաքվի

¹¹ Այդ քննարկումները ստացել են «Անվտանգության երկխոսություն» պաշտոնական ամսականումը։

համար՝ առավել կոշտացնելով նրա դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում: Մասնավորապես, երբ հարցը դիտում ենք Ադրբեջանի կողմից Ղարաբաղում ազգային ինքնորոշման պայքարն ահաբեկչության հետ նույնացնելու փորձերի, և հիմնահարցը ռազմական ճանապարհով լուծելու վերաբերյալ հայտարարությունների ենթատեքստում:

Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ այս օրենսդրական փոփոխությամբ որոշակիորեն մեծանում են ռազմաքաղաքական ոլորտում ՀՀ-ԱՄՆ հարաբերությունների հնարավորությունները:

Անդրադառնալով անվտանգության ոլորտում հայ-ամերիկյան համագործակցությանը՝ հարկ է հիշատակել, որ 2000թ. հուլիսին՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի Վաշինգտոն կատարած այցի ընթացքում, ստորագրվեց անվտանգության ոլորտում Հայաստանի և Միացյալ Նահանգների կառավարությունների միջև առաջին լուրջ և գործնական համաձայնագիրը՝ «ՀՀ կառավարության և ԱՄՆ-ի կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքերի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին»¹²: Մեր կարծիքով, վերջինիս հաջող իրականացումը ճանապարհի կհարթի հետագա համաձայնագրերի համար:

Այսպիսով, ամփոփելով հայ-ամերիկյան հարաբերություններին վերաբերող նյութը, նշենք, որ Հայաստանի և ԱՄՆ միջև գործընկերային հարաբերությունների զարգացման հեռանկարները զգալիորեն կախված են այն բանից՝ կստանա՞նք արդյոք ռուս-ամերիկյան հարաբերությունները նոր բովանդակություն, թե՛ ոչ: Իսկ հաշվի առնելով, որ 1 մլն-ից ավելի հայեր ԱՄՆ-ի օրինապահ և լոյալ քաղաքացիներ են¹³ և, որ Ամերիկայի հայ համայնքի գործունեությունից մեծապես կախված է Հայաստանի քաղաքական և տնտեսական բարգավաճումը, Հայաստանի ցանկացած կառավարություն ձգտելու է հաստատել գործընկերային հարաբերություններ Միացյալ Նահանգների հետ: Սակայն, սա ղեռն խնդրահարույց հարց է՝ հայ-ռուսական և հայ-իրանական հարաբերությունների հետագա զարգացումները կարող են հանգեցնել նոր անակնկալ փոփոխությունների:

¹² Այդպիսի համաձայնագիր ԱՄՆ-ը ստորագրել է նաև Վրաստանի և Ադրբեջանի հետ (1999թ.):

¹³ Տես Հայերն աշխարհում (համրագիտական համառոտ բառարան), կազմ. Պետրոսյան Ա., Իսոյան Ա., Խուրաճերդյան Կ., ե., 1995, էջ 21: